Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

# ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ

## ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

331.1
Ա-89

№ 28

Հրատարակություն Հ. Ա. Մ. Խ.-ի

ԵՐԵՎԱՆ 1925

ՏՓԽԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գլլտ. 202ր. Պատ. 214 Տիրաժ. 1000

331.1
Ա-89

15 JAN 2010

05 FEB 2007

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI—1922

# ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՂ-ՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Փոխօգնության գանձարկղներ կազմակերպվում են այն ձեռնարկություններում (հիմնարկներում), ուր փոխօգգանձարկղի անդամների թիվը 100-ից պակաս չէ։

2. Միության անդամների սակավության կամ մենակ աշխատողներ ունեցող մանր ձեռնարկություններ լինելու դեպքում քաղաքներում կազմակերպվում են համաքաղաքային գանձարկղներ

25 FEB 2013
22777



համապատասխան միությունների վարչությունների կից։

Համաքաղաքային գանձարկղների կազմակերպման համար անհրաժեշտ է, որ միությունն ունենա գանձարկղի 100-ից ոչ պակաս մասնակից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե միության մեջ գանձարկղի անդամների թիվը 100-ից պակաս է, վերջիններս միանում են այլ մանր միությունների հետ և այդպիսով կազմակերպում Փոխօգնության Միջմիութենական Գանձարկղ։

3. Շրջանային Միջմիութենական Փոխօգգանձարկղը կազմակերպվում է շրջանում կամ գավմասում, շրջանային (գավմասային) միջմիութենական քարտուղարության կից՝ 100-ից ոչ պակաս անդամ ունենալու դեպքում։



## ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Փոխօգգանձարկղը վարձու աշխատանքով զբաղվող անհատների կամավոր կազմակերպությունն է։ Սա իրեն նպատակ է դնում ընկերական—նյութական օգնություն հասցնել կարիքավոր ընկերներին՝ նրանց հասած աղետների դեպքում (գործազրկության, ճամբի ծախս), յերբ Սոցապօրենս-

դրությամբ օգնություն չի նախատեսնվում, կամ վերջինից ստացվածն անբավարար է, այլ և ուրիշ սուր կարիքի դեպքերում օգնություն հասցնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Փոխօգգանձարկղը կազմակերպվում է արհմիությունների նախաձեռնությամբ և հաստատվում է միության վարչության կողմից:

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3. Գանձարկղին մասնակցել կարող են այն բոլոր բանվորները ու ծառայողները, վորոնք արհմիության անդամ լինելու իրավունք ունեն և աշխատում են գանձար-



կղի գործնեության համապատասխան շրջանի ձեռնարկություններում և հիմնարկություններում:

4. Ամեն մի բանվոր և ծառայող (կ. 3) կարող է մասնակցել գանձարկղին նրա գործնեության շրջանում գտնվող ձեռնարկության մեջ աշխատանքի մտնելուց հետո՝ մուծելով մուտքի վճար:

5. Գանձարկղի անդամ ընդունվելու մասին բոլոր դիմումները պիտի ներկայացնել գանձարկղի բյուրոյին (անձամբ կամ լիազորի միջոցով), վորը և վորոշում է ընդունելու հարցը:

6. Փոխոգնության գանձարկղին ժամանակցելը նշվում է արհմիութենական անդամագրքույկի համապատասխան տեղում, իսկ միության վոչ անդամին տրվում է հատուկ վկայական, վորի մեջ նույնպես արվում են համապատասխան նշումներ։

7 Այլ քաղաքներից (ձեռնարկություններից) ժամանող փոխոգնության գանձարկղի անդամները կամ այլ միություններից տեղափոխվածները տեղական գանձարկղի մեջ ընդունվում են գանձարկղի հին անդամների հավասար



իրավունքներով, առանց մուծելու մուտքի վճար, սակայն պայմանով, վոր մեկնման վայրից ունենան համապատասխան վկայական՝ գանձարկղի անդամի բոլոր պարտականությունները կանոնավորապես կատարած լինելու մասին։

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ** — Յեթե մի գանձարկղից մյուսին անցնելու միջոցի ընդհատումը տևում է յերեք ամսից ավելի առանց հարգելի պատճառի, ապա հին անդամակցությունը ինքնին վերանում է։

8. Փոխոգգանձարկղի գործադուրկ դարձած անդամներն անդամակցական վճարները մուծե

լուց ազատվում են, սակայն մնում են անդամ՝ որոնից բխող բոլոր իրավունքներով։

9. Տվյալ ձեռնարկության գանձարկղին մասնակցելու իրավունքը կորցնում են՝

ա) Այլ միությունով ընդգրկվող ձեռնարկություններ տեղափոխվողները։

բ) Գանձարկղի գործունեության վայրից հեռացողները։

գ) Անհարգելի պատճառներով յերեք ամսվա ընթացքում վճարները չմուծողները և գանձարկղի հանդեպ իրենց ֆինանսական պարտականությունները չկատարողնե-



րը (վերցրած վերադարձ նպաստները չվերադարձնողները)։

դ) Վարկաբեկիչ արարքների համար միությունից վտարվածները։

10. Գանձարկղից դուրս մնալը կատարվում է կամ ինքնին՝ համաձայն կանոնադրության 9-րդ պարագրաֆի (կետ ա, բ, գ) կամ գանձարկղի ամեն մի մասնակցողի ցանկությամբ, այլ և գանձարկղին մասնակցողների ընդհանուր ժողովի վորոշմամբ։

11. Գանձարկղից դուրս մնացածները կամ հեռացածները չեն կարող պահանջել վերադարձնել մուծած վճարները։

12. Գանձարղի անդամության իրավունքից զրկվածները (կետ գ և դ), նրանց իրավունքը վերականգնող պայմանները ներկայանալու դեպքում, կարող են վերընդունվել՝ սակայն նորից մուծելով մուտքի վճարը։

## ԳԱՆՁԱՐԿՂԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

13. Գանձարկղի գործերը վարում են՝

ա) Ընդհանուր ժողովը,

բ) Պատգամավորական ժողովը,

գ) Գանձարկղի Բյուրոն։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

14. Գանձարկղի բոլոր գործե-



րը վարում է նրա մասնակիցների ընդհանուր ժողովը, որը հրավիրվում է յերկու ամիսը մեկ անգամից ոչ պակաս։

15. Գանձարկղի մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասության մեջ է մտնում՝

ա) Գանձարկղի Բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը։

բ) Գանձարկղի Բյուրոյի գործունեության քննությունը և հաստատելը, գանձարկղի ծախսերի և յեկամուտների նախահաշվի ու նրա կատարման հաշվետվության հաստատելը։

գ) Գանձարկղի մասնակիցների անդամավճարների չափի սահմանելը ու նրա մեջ փոփոխություններ մտցնելը։

դ) Բացի անդամավճարներից գանձարկղի միջոցները լրացնելու համար այլ մեթոդների սահմանելը։

յե) Նպաստների չափի և նրանց վերադարձնելու կարգի սահմանելը։

զ) Գանձարկղի միջոցների տեղավորման կարգի վորոշելը։

է) Նպաստների (անվերադարձ) չափի և նրանց բաշխելու կարգի սահմանելը։



ը) Գանձարկղի ֆոնդերի չափի (տոկոսի) և նրանց ծախսելու կարգի սահմանելը։

թ) Գանձարկղի կանոնադրության հաստատելը և նրա մեջ փոփոխություններ մտցնելը։

ժ) Գանձարկղի գործերի վերստուգում նշանակելը։

ի) Բյուրոյի գործունեության առթիվ յեղած բողոքների քննությունը։

լ) Գանձարկղի կազմից անդամներ հեռացնելը։

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

16. Պատգամավորական ժողո-

վը գումարվում է ամիսը մեկ անգամից վոչ պակաս և նպատակ ունի՝

ա) Ընդհանուր ժողովի որակարգի նախնական քննությունը։

բ) Ընդհանուր ժողովների որակարգի լսելը և քննությունը, (կետեր՝ բ, գ, դ, յե, ը, թ, ժ)։

17. Պատգամավորական ժողովները գումարվում են այն նորմաներով, որ սահմանում է ընդհանուր կամ պատգամավորական ժողովը։ Պատգամավորական ժողովների ընտրությունները ղեկավարում է Գանձարկղի Բյուրոն։

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ** — Պատգամավորական ժողովներ ստեղծվում են այն գանձարկղներին կից, վորոնք ունեն 200-ից վոչ պակաս անդամ։



## ԳԱՆՁԱՐԿՂԻ ԲՅՈՒՐՈՆ.

18. Գանձարկղի Բյուրոն ընտրվում է գանձարկղի մասնակիցների ընդհանուր կամ պատգամավորական ժողովում 3 ից մինչև 9 հոգու կազմով և վոչ պակաս քան վեց ամիս ժամանակով

Գանձարկղի Բյուրոյի իրավասության մեջ է մտնում՝

ա) Գանձարկղի անդամ ընդունվելու մասին դիմումների քննությունը։

բ) Գանձարկղի անդամներին

նպաստ տալու մասին միջնորդությունների քննությունը և նպաստ տալը։

գ) Նախնական մշակման և յենթարկում ընդհանուր կամ պատգամավորական ժողովի քննության ատարկա հանդիսացող հարցերը, բացառությամբ «ա» և «բ» կետերի ու պարագրաֆ 14 ի։

դ) Գանձարկղի անդամների հաշվետառումը։

յե) Պարագրաֆ 9-րդ «Գ» կետի հիման վրա գանձարկղի անդամությունից հեռացնելու հարցերի քննությունը։

զ) Գանձարկղի մասնակիցների ընդհանուր և պատգամավորական



ժողովների հրավիրումը։

ե) Ընդհանուր կամ պատգամավորական ժողովների համար հաշվետվություններ կազմելը։

ը) Գանձարկղի գործարանային լիազորների գործունեության ղեկավարությունը։

19. Գանձարկղի Բյուրոյի բոլոր վորոշումները կարող են չեղյալ համարվել (отменены) ընդհանուր կամ պատգամավորական ժողովի կողմից։

20. Ձեռնարկություններում կամ ցեխերում, ուր գանձարկղի անդամների թիվը 10—ից պակաս

չէ, նրանց միջից ընտրվում է լիազոր։

Լիազորի իրավասության մեջ է մտնում՝

ա) Գանձարկղի անդամներից անդամավճարներ գանձելը։

բ) Գանձարկղի անդամներից դիմումներ ընդունելը։

գ) Գանձարկղի մասնակիցների կարիքի աստիճանի ստուգումը և նպաստ տալու մասին դիմումների առթիվ իր յեզրակացությունը Բյուրոյին ներկայացնելը։

դ) Գանձարկղի նոր անդամներ գրավելը,

յե) Գանձարկղի մարմինների



վորոշումների կիրառումը կյանքի մեջ։

## ԳԱՆՁԱՐԿՂԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

21. Գանձարկղի միջոցները կազմվում են՝

ա) Գանձարկղի անդամների մուտքի վճարներից,

բ) Անդամների ամսավճարներից, վորը ամսական աշխատավարձի մեկ տոկոսից չպետք է գերազանցի։

գ) Յերեկույթներ կազմակերպելուց, կամավոր հատկացումներից և այլն,

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**— Այն գանձարկղներում, ուր անդամների թիվը

ղզալի չափով խոշոր է, Գանձարկղի վարչական մարմինները կարող են ունենալ անդամավճարների ու մուտքի վճարների հատուկ գանձողներ։

22. Գանձարկղի միջոցները ծախսվում է Բյուրոյի կողմից՝ ընդհանուր կամ պատգամավորական ժողովի սահմանած կարգով, և բաշխվում է հետևյալ ֆոնդերի՝

ա) Վերադարձ նպաստներ,

բ) Անվերադարձ նպաստներ,

գ) Պահեստի ֆոնդ ( սա կազմվում է ընդհանուր ֆոնդի 10 տոկոսից)։

23. Վերադարձ նպաստներ տըր-



վում են գանձարկղի այն անդամներին, վորոնք մասնակցում են գանձարկղում վոչ պակաս քան մեկ ամիս և անվերադարձ—նըրանց, վորոնք մասնակցում են վոչ պակաս քան յերկու ամիս։

24. Նպաստ ստանալու մասին դիմումները Բյուրոն պետք է քննի վոչ ուշ քան յերեք որվա ընթացքում ստանալուց հետո։

## ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

25. Գանձարկղի գործերը վերստուգելու համար ընդհանուր կամ պատգամավորական ժողովը ընտրում է յերեք անդամից և յերկու

թեկնածուից բաղկացած վերստուգիչ հանձնաժողով։

26. Վերստուգիչ հանձնաժողովի վրա պարտականություն է դըրվում հանկարծակի վերստուգումներ կատարել, այլ և հիմնապես հետազոտել գանձարկղի գործերն ու ֆինանսական հաշվետվությունը։

27. Վերստուգիչ հանձնաժողովի կողմից պետք է հաստատված լինի գանձարկղի ֆինանսական հաշվետվությունը։ Վերստուգման ակտը ներկայացվում է կենտվարչության (Գավվարչության)։

## ԳԱՆՁԱՐԿՂԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

28. Գանձարկղի լիկվիդացիան



կատարվում է Գանձարկղի անդամների ընդհանուր կամ պատգամավորական ժողովի ձայների վոչ պակաս յերկու յերրորդի վորոշմամբ։

29. Լիկվիդացիան կատարվում է, յեթե՝

ա) Գանձարկղը բավարար չափ անդամներ չունի,

բ) Անհրաժեշտ միջոցները բացակայում են և հնարավորություն չկա գտնելու,

գ) Գանձարկղի նման մի կազմակերպության հետ ձուլվելիս։

30. Լուծարքման ժամանակ կանխիկ յեղած միջոցները գոր-

ծաղրվում են ընդհանուր կամ պատգամավորական ժողովի նախատեսած կարգով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Զուլման դեպքում (Պար. 29 կ. գ) Գանձարկղի միջոցները հանձնվում են ուժեղացնելու միացյալ գանձարկղի միջոցները։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻ
С.С.Р.А. Публи
7/XI—1922
Имени А. М
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0196633

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.